

ԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ
ՈՃԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 811.19:340
ԳՄԴ 81.2Հ+67
Հ 177

*Խմբագիր՝ Սարգիս Ավետյան
բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Տպագրության է երաշխավորել ԵՊՀ
ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը:

*Գրախոս՝ Ն. Գասպարյան
բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Հակոբյան Աննա
Հ 177 Օրենսդրական տեքստի ոճակառուցվածքային առանձ-
նահատկությունները/Ա. Հակոբյան.- Եր.: Արմավ, 2016.-
132 էջ:

Սույն մենագրության մեջ ԱՄՆ-ի Սահմանադրության և Մարդու
Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի փաստական նյութի հի-
ման վրա հանգամանորեն քնության են ենթարկվում օրենսդրական
ենթառձի ոճակառուցվածքային առանձնահատկությունները՝ բա-
ռային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում:

ՀՏԴ 811.19:340
ԳՄԴ 81.2Հ+67

ISBN 978-9939-863-46-7

© Հակոբյան Աննա, 2016
© «Արմավ», 2016

ՆԱԽԱԲԱՆ

Իրավական հասարակություն ունեցող ցանկացած պետության կարևորագույն խնդիրը երկրում օրենքի գերակայության գործառույթի իրականացումն ու ամրապնդումն է: Հաշվի առնելով օրինականության սկզբունքի կարևորությունը՝ յուրաքանչյուր պետություն իր սահմանադրության մեջ ամրագրում է հիմնարար դրույթներ և դրանց վերաբերյալ պարզաբանումներ տալիս: Իրավունքի գերակայությունը պաշտպանող երկրներում այդ հիմնարար արժեքներին հավատարիմ լինելն արտահայտվում է անհատի և պետության փոխհարաբերությունները կարգավորող ամբողջական սահմանադրական կառույցով: Հետևաբար, մարդու սահմանադրական իրավունքները, հիմնարար ազատություններն ու պարտականությունները կարգավորում են անձի և պետության միջև գոյություն ունեցող հարաբերությունները և կոչված են ոչ միայն մարդու սահմանադրական իրավունքների, այլև խախտված իրավունքների հուսալի պաշտպանության ապահովումը երաշխավորելու համար:

Օրենքի գերակայության սկզբունքն անմիջականորեն բխում է հասարակության կողմից իրականության յուրացման իրավական գիտակցությունից: Ուստի իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությամբ զբաղվում են իրավական գիտակցությամբ օժտված կոնկրետ մարդիկ, որոնց գործունեության արդյունավետությունը մասնավորապես կախված է տվյալ անհատի իրավական գիտակցության մակարդակից: Հարցի էությունն ավելի մանրամասն պարզաբանելու նպատակով հարկ ենք համարում նշել, որ որքան էլ տարբեր լինեն իրավաբանական լեզվախոսքային գործունեության ազգամշակութային առանձնահատկությունները, այնուամենայնիվ, յուրաքանչյուր իրավական լեզվամշակույթի մեջ կա համընդհանուր բաղադրիչ, որը պայմանավորված է տարբեր մշակույթների ներկայացուցիչների ընդհանուր մտածելակերպով: Այդ մասին են վկայում մի շարք երկրների սահմանադրությունները և օրենս-

դրական նմանատիպ այլ փաստաթղթերը, որոնք թե՛ գաղափարապես և թե՛ լեզվական տեսանկյունից կառուցված են գրեթե նույնական օրինաչափությունների համաձայն: Իրավաստեղծ գործունեությունը և իրավական դաշտի բոլոր տարրերը, առանց բացառության, վերարժևորվում են լեզվի օգնությամբ: Ուստի տվյալ խոսքը գործադրող բոլոր անհատները համապատասխան լեզվական միջոցների և օրինաչափությունների գործածությամբ փորձում են պահպանել լեզվական-կառուցվածքային բոլոր այն առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված է ոչ միայն հաղորդվող նյութի ճշգրտությունը, այլև տրամաբանականությունը և հատկապես պատճառահետևանքային փոխադարձ կապի առկայությունը:

Գործառական ոճագիտության արդի ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պաշտոնական ոճին նվիրված աշխատությունները: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում այն կոչված է եղել լուծելու կանոնակարգման լեզվի տարբեր գործաբանական և ոճաբանական խնդիրներ: Պաշտոնական ոճը նշանակալից գիտական հետաքրքրություն է ներկայացնում թե՛ լեզվաբանների և թե՛ իրավական տարբեր համակարգեր ուսումնասիրող իրավագետների համար, քանի որ տվյալ ոճին բնորոշ լեզվական առանձնահատկությունների իմացությունն ու ճշգրիտ կիրառությունն անհրաժեշտ է տարբեր երկրների միջև իրավական փոխհարաբերությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար: Պաշտոնական ոճի նկատմամբ շարունակական հետաքրքրությունը կապված է նաև գրական անգլերենով կատարվող տեղեկատվական փոխանակումների ծավալի մեծացման հետ, որը դարձել է անխուսափելի անհրաժեշտություն գիտական մտքի, միջպետական գործարար և պաշտոնական հարաբերությունների զարգացման բնականոն ընթացքի համար:

Ներկա ուսումնասիրության նպատակը պաշտոնական ոճի օրենսդրական ենթաոճի ոճակառուցվածքային առանձնահատկությունների քննությունն է՝ կատարված Ամերիկայի

Միացյալ Նահանգների Սահմանադրության և Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի փաստական նյութի հիման վրա: Հետազոտության նյութի ընտրությունը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, լինելով աշխարհի ամենահակիրճ և կայուն սահմանադրություններից մեկը, համապարփակ կերպով կարգավորում է պետական իշխանության, պետության և հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող հիմնարար հարաբերությունները, ներկայացնում պետական և հասարակական բոլոր կարևորագույն նորմերը: Ամերիկյան Սահմանադրությունը առաջին գրավոր Սահմանադրությունն է, որը կարևոր նշանակություն ունեցավ և դասական օրինակ ծառայեց այլ երկրների սահմանադրությունների համար: 1949թ. ամերիկյան Սահմանադրության օրինակով Սահմանադրություն է գրվում Գերմանիայի, իսկ ավելի ուշ՝ Հնդկաստանի, Կանադայի, Հարավային Աֆրիկայի և մի շարք այլ երկրների համար: Ընդ որում, շուրջ երկուսուկեսդարյա իր գոյության և գործածության ընթացքում այն գրեթե փոփոխությունների չի ենթարկվել: Միացյալ Նահանգների Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մոտ 5000 առաջարկներից Կոնգրեսն ընդունել է միայն 40-ը, որոնցից մինչև այժմ ընդամենը 27-ն է իրականացվել:

Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիային, այն միջազգային համաձայնագիր է, որը կարգավորում է մարդու իրավունքները և հիմնական ազատությունները Եվրոպայում: Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիան կազմվել է 1950 թ. նոր ստեղծված Եվրոպայի Խորհրդի կողմից: Համաձայնագիրը ուժի մեջ է մտել 1953 թ. սեպտեմբերի 3-ից: Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ պետությունները անդամակցում են Կոնվենցիային և նոր մասնակիցները պարտավորվում են Կոնվենցիան վավերացնել սեղմ ժամկետներում: Իրավական տեսանկյունից չափազանց կարևոր օրենսդրական այս փաստաթուղթը ամերիկյան Սահմանադրության նման աչքի է ընկնում իր հակիրճությամբ և

բնութագրվում օրենսդրական ենթաոճի համար տիպական գրեթե բոլոր ոճակառուցվածքային առանձնահատկություններով:

Քննությունը ցույց է տալիս, որ օրենսդրական տեքստն իր գործառական բնութագրի առումով իմաստակառուցվածքային և ոճական տարրերի այնպիսի համալիր ամբողջություն է, որի համար կարևոր նախապայման է հաղորդվող նյութի ճշգրտությունը, տրամաբանականությունն ու պատճառահետևանքային փոխադարձ կապի առկայությունը: Սույն մենագրության մեջ փորձ է արվում ուսումնասիրել պաշտոնական խոսքի կառուցման միջոցներն ու եղանակները, խոսքային գործունեության մեջ դրանց կիրառման կանոնները և պարզել օրենսդրական ենթաոճում արտալեզվական գործոններով պայմանավորված գործառական-ոճական առանձնահատկությունները (բառային, ձևաբանական, շարահյուսական մակարդակներում):

Սույն ուսումնասիրության նպատակն է՝

1. Պարզաբանել պաշտոնական ոճի տեղն ու դերը գործառական ոճերի համակարգում՝ խնդիրը դիտարկելով արտալեզվական հիմքի վրա:

2. Լեզվաոճական վերլուծության մեթոդի կիրառմամբ փորձել վերհանել լեզվական այն հաստատուն միավորները, որոնք հանդես են գալիս որպես պաշտոնական ոճը բնութագրող ոճակագմիչ տարրեր, այդ թվում.

ա) քննարկել օրենսդրական տեքստում գործածվող իրավաբանական եզրույթները որպես հաղորդում ապահովող իմաստաբովանդակային անհրաժեշտ տարրեր,

բ) ձևաբանական և շարահյուսական տարրերի քննությամբ բացահայտել օրենսդրական ենթաոճի բառային և բառակապակցական շարույթների բնութագրական գծերը և գործառական արժեքը:

3. Քննել օրենսդրական ենթաոճում իրացվող խոսքի հիմնական գործառույթները՝ սահմանելով դրանց փոխներթափանց-

մամբ ստեղծված արդյունքը որպես գործառույթային նոր որակ (ուղղորդող-գնահատողական գործառույթ):

4. Ուսումնասիրել ֆրանսերենից անգլերեն ներթափանցած բառային փոխառությունների յուրացման և ամրակայման գործընթացը որպես իրավաբանական եզրույթների համակարգը բնութագրող կայուն օրինաչափություն:

5. Ուսումնասիրել օրենսդրական տեքստի նվազագույն միավորի՝ պարբերության կառուցվածքային առանձնահատկությունները և հաղորդակցական-գործաբանական արժեքը:

6. Ամերիկյան Սահմանադրության և Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի տեքստերի քննությամբ վերհանել օրենսդրական ենթաոճի ոճատարբերակիչ շարահյուսական կառույցները և որոշարկել դրանց գործառական արժեքը:

7. Հենվելով գործառական ոճագիտության ոլորտում կատարված ուսումնասիրությունների տեսական եզրահանգումների և մեր լեզվական նյութի քննության արդյունքների վրա՝ օրենսդրական տեքստը դիտարկել որպես գրավոր հաղորդակցման այնպիսի միջոց, որն ուղղված է ինչպես տեղեկատվական, այնպես էլ ներազդման գործառույթների իրացմանը:

ԳԼՈՒԽ I
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՆՁԱՈՃԸ
ՈՐՊԵՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՈՐՏ

Գործառական ոճ անվանումն առնչվում է լեզվի գործաբանության այն հատուկ ոլորտին, որը միտված է արձանագրելու, հետազոտելու և ընդհանրացնելու գիտական տարատեսակ փաստեր և երևույթներ, որոնց ուսումնասիրությունն էական կարևորություն ունի հասարակական գիտակցության ձևավորման գործում: Ոճերն ըստ գործառույթների խմբավորելիս հաշվի են առնվում տարբեր ոլորտներում առկա գործառական այն առանձնահատկությունները, որոնք ունեն արտալեզվական բնույթ և ազդում են լեզվի կառուցվածքային և կիրառական մի շարք օրինաչափությունների կազմավորման վրա: Հետևաբար, գործառական ոճերի դասակարգումն այն կարևոր նախապայմանն է, որով տեղի է ունենում համընդհանուր լեզվական օրինաչափությունների սահմանազատումն ըստ մասնագիտական ուղղվածության և նպատակադրման: Եվ քանի որ գործառական հետազոտությունների անհրաժեշտությունը և գործառական ոճաբանության որպես լեզվաբանական գիտակարգի ձևավորումը պայմանավորված է գրական լեզվի հասարակական գործառույթների զարգացման ընթացքով, հենց այդ հիմքի վրա էլ կարևորվում և ելակետային է դառնում պաշտոնական ոճի լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Պաշտոնական ոճը նախատեսված է օրենքը հասարակությանը լուսաբանելու, ինչպես նաև տվյալ բնագավառի մասնագետի կողմից տեղեկատվություն գրանցելու և մանրագնին քննարկելու համար: Օրենքն ընդգրկում է բազմապիսի գործունեություններ, սկսած օրենսդրական ակտերի նախագծումից մինչև երկու անհատների միջև համաձայնության պայմանագրի կնքումը, որոնցից յուրաքանչյուրը պետք է պաշտոնապես գրառվի: Այս կարգի հաղորդակցման հիմնական նպատակն է հավաստագրել այն պայմանները, որոնք

իրավաբանորեն պարտավորեցնում են որևէ նախաձեռնության մեջ ընդգրկված երկու կողմերին: Այս կողմերը կարող են լինել պետությունը և քաղաքացին, երկու և ավելի քաղաքացիներ, հասարակությունը և նրա անդամները (իրամանագիր կամ օրենսդրական ակտ), երկու կամ ավելի ձեռնարկություններ կամ մարմիններ (գործարար նամակագրություն կամ համաձայնագիր), երկու կամ ավելի կառավարություններ (դաշնագիր, միջազգային պայմանագիր), ղեկավար և ստորադաս անձինք (իրաման, ցուցմունք, պաշտոնական հրահանգ), նախագահական կազմ և ասամբլեա (իրամանագիր, ընթացակարգ, արձանագրություն): Չնայած նմանատիպ բազմազանությանը, հարկ է նշել, որ այս գործունեություններից յուրաքանչյուրն ինչ-որ առումով կապված է պարտավորությունների հարկադրման և իրավունքի շնորհման հետ: Սակայն պաշտոնական փաստաթղթերի լեզվառձական առանձնահատկություններն ուսումնասիրելիս և առհասարակ ցանկացած իրավական փաստաթուղթ գործառական քննության ենթարկելիս անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ օրենսդրության լեզվին, որը, ըստ էության, հանդիսանում է պաշտոնական ոճի կայուն լեզվական օրինաչափությունները բնութագրող ենթառձ և, հանդես գալով որպես պաշտոնական խոսքի գրավոր տարատեսակ, իր մեջ ամփոփում է լեզվական դյուրըմբռնելիությանն առնչվող բոլոր այն հարցերը, որոնք բազմիցս քննարկման առարկա են դարձել թե՛ լեզվաբանների և թե՛ իրավաբանների կողմից: Որոշ լեզվաբաններ գտնում են, որ պաշտոնական անգլերենը՝ մասնավորապես գրավոր տարատեսակը, ենթակա է պարզեցման, քանի որ այն մատչելի չէ ոչ մասնագետներին: Այս հարցի քննարկումը չի վրիպել նաև ԱՄՆ-ի օրենսդրական համակարգում բարեփոխումներ կատարող մի շարք իրավաբանների ուշադրությունից: Այդ մասին է վկայում 70-ական թվականներին մշակված այն օրինագիծը, որի համաձայն իրավաբանական փաստաթղթերը, մասնավորապես առևտրի ոլորտում կնքված պայմանագրերը, պետք է գրառվեին հնարավորինս հստակ և քաղաքացիներին մատչե-

լի լեզվով (տե՛ս Аезов С., 1986:58): Այսպիսով, սահմանվեցին որոշակի լեզվական օրինաչափություններ, որոնք նպաստեցին պաշտոնական փաստաթղթերի տեքստի շարադրանքի պարզեցմանը: Նման լեզվական պարզեցման միտումներ նկատելի են նաև օրենսդրական համակարգում, և պաշտոնական գրառումներ կատարող անձինք փորձում են առավելագույնս ճշգրիտ լինել ու խուսափել երկիմաստությունից: Այս ամենը գալիս է այն բանի գիտակցումից, որ նրանք գործ ունեն օրենքի ձևակերպման հետ, և օրենքի ճշգրտությունից են կախված բազմաթիվ մարդկանց ճակատագրերը: Նման գրագրությունները կազմում են իրավաբանների մասնագիտության անբաժանելի մասը: Հետևաբար, յուրաքանչյուր իրավաբան անհրաժեշտաբար համապատասխան մասնագիտական բառապաշար է գործածում և չի ստեղծում նոր բառեր, որոնք կարող են խոչընդոտել մտքի հստակությանը և անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Իրավաբանական կաղապարային մոդելներին հավատարիմ մնալը և դրանց գործածությունն իրավաբանների կողմից պայմանավորված է ոչ միայն ներկայիս պահանջներով, այլև անցյալի ավանդույթի ուժով, որից էլ գալիս է իրավաբանների՝ լեզվական տեսանկյունից այդքան պահպանողական լինելը:

Այսպիսով, պաշտոնական թղթերի գրագրությամբ զբաղվող անձը պետք է հաշվի առնի այն փաստը, որ տվյալ պաշտոնական փաստաթուղթը երաշխավորում է այն ամենը, ինչ ասվում է, և միաժամանակ բացառում է բազմիմաստությունը:

Պաշտոնական ոճի կարևորագույն խնդիրներից է ենթառճերի դասակարգումը, որը կատարվում է որոշակի սկզբունքների և չափանիշների համաձայն: Հայտնի է, որ յուրաքանչյուր դասակարգման հիմքում ընկած են լինում լեզվական չափորոշիչներ, որոնց առկայությամբ է միայն հնարավոր լեզվական իրողությունների խմբավորումը: Օրինակ՝ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը պաշտոնական ոճն անվանում են վարչական կամ վարչագործարարական

ոճ, որի խոսքային առանձնահատկությունները պայմանավորված են այն պաշտոնական հարաբերություններով, որ գոյություն ունեն պետության և պաշտոնական օղակների ներկայացուցիչների միջև:

Պաշտոնական ոճի շրջանակներում Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը տարբերակում են հետևյալ ենթառճերը.

Օրենսդրական ենթառճ, որի գործառության բնագավառը օրենսդրությունն է (սահմանադրություն, օրենք, օրենսգիրք, կառավարական որոշումներ): Այս ենթառճով գրագրությունն իրացվում է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների և քաղաքացիների, ինչպես նաև անհատ քաղաքացիների միջև, եթե նրանց հարաբերություններում իբրև միջնորդ հանդես է գալիս պետական որևէ մարմին:

Դիվանագիտական ենթառճ, որի գործառության շրջանակը միջպետական հարաբերություններն են, երբ մի պետություն «խոսում է» մեկ այլ պետության հետ (միջպետական պայմանագիր, համաձայնագիր, հուշագիր, վերջնագիր (ուլտիմատում), հայտարարություն (դեկլարացիա), կոմյունիկե և այլն):

Դատաքննչական ենթառճ, որի գործառության շրջանակներն են իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատախազություն, դատարան) աշխատանքի ոլորտը (ոստիկանական արձանագրություն, մեղադրական եզրակացություն, փաստաբանական ճառ, քրեական, քաղաքացիական օրենսգրքեր, դատավարական օրենսգիրք և այլն):

Գրասենյակային ենթառճ, որը գործադրվում է գրասենյակային գրագրություններում (տեղեկանք, լիազորագիր, ստորագրություն, ակտ, դիմում, արձանագրություն և այլն):

Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը տարբերակում են նաև պաշտոնական ոճին բնորոշ հետևյալ հիմնական ոճատարբերակիչ հատկանիշները.

հատուկ բառապաշարի՝ վարչաբանությունների օգտագործում.

բառերի ուղղակի իմաստով գործածություն և փոխաբերության բացառում.

բայանուն գոյականների օգտագործում բայերի փոխարեն.

քերականական կանոնավոր ձևերի գործածում և խոսակցական երանգ ունեցող ձևերից խուսափում.

խոսքի կանոնակարգված ուղղակի շարադասություն.

խոսողի անձնական վերաբերմունքն արտահայտող և պատկերավոր լեզվական միավորների բացակայություն (տե՛ս Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., 2007:67-68):

Լ. Եզեկյանը պաշտոնական ոճի ենթաոճերը դասակարգում է հետևյալ կերպ՝ օրենսդրական, վարչագրասենյակային, դիվանագիտական, գործավարական-գրասենյակային: Նա նշում է պաշտոնական ոճի հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

լեզվի հաղորդման և հաղորդակցման գործառույթ, որը պայմանավորված է նյութի թելադրանքով և ոճական նպատակադրմամբ.

խոսքի հակիրճություն, շարադրանքի սեղմություն, լեզվական միջոցների խնայողաբար գործածություն.

շարադրանքի կաղապարայնություն, լեզվական շաբլոն, այս ոճին յուրահատուկ կաղապարների գործածություն.

եզրույթների, համապատասխան մասնագիտական, գործառական բառաշերտերի, ինչպես նաև հապավումների, համառոտագրությունների, բառապատճենումների լայն կիրառություն.

վերացական, ընդհանրացնող նշանակություն ունեցող բառերի, վերացական գոյականների, առավելապես՝ բայանունների գերակշռություն.

բառերի բուն անվանողական իմաստով գործածություն, փոխաբերական իմաստի, բազմիմաստության բացակայություն.

բարդ և բաղադրյալ շաղկապների, մասամբ նաև եղանակավորող բառերի գործածություն՝ հիմնականում պատճառի, հետևանքի, նպատակի, հիմունքի իմաստներով, որոնք ապա-

հովում են խոսքի տրամաբանականությունն ու պատճառա-
հետևանքային կապը.

շարադրանքին բնորոշ պատմողական բնույթ, սահմանական
եղանակի ներկա ժամանակի բայաձևերի լայն գործածություն,
առանձին փաստաթղթերում նաև հարկադրական և հրամայա-
կան եղանակի բայաձևերի կիրառություն.

բարդ ստորադասական, պարբերույթներով հարուստ նախա-
դասությունների կիրառություն, երբեմն նաև միակազմ նախա-
դասությունների գործածություն, նախադասության անդամնե-
րի կայուն շարադասություն.

հեղինակային, անհատական ոճի բացակայություն, շարա-
դրանքի չեզոք ոճ՝ առանց անհատականության դրսևորման.

լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցների բա-
ցակայություն (տե՛ս Եզեկյան Լ., 2003:52):

Պաշտոնական ոճի ենթառճերի դասակարգմանն անդ-
րադարձել է նաև Ի. Գալպերինը: Նա ընդհանուր անդրադարձ
է կատարում պաշտոնական ոճի կարևոր և հիմնական ա-
ռանձնահատկություններին և մատնանշում դրանցից մի քա-
նիսը, ինչպես, օրինակ, արտահայտման պայմանականութ-
յուն, հուզաարտահայտչական երանգավորման բացակայութ-
յուն և այլն (տե՛ս Galperin I., 1977:312): Սակայն, որքան էլ
ընդհանուր կարող են լինել պաշտոնական ոճի լեզվաոճական
առանձնահատկությունները, այնուամենայնիվ Ի. Գալպերինը
տարբերակում է հետևյալ ենթառճերը՝

գործարար փաստաթղթերի լեզու.

իրավաբանական փաստաթղթերի լեզու.

դիվանագիտության լեզու.

ռազմական փաստաթղթերի լեզու:

Ռ. Հիլտունենը պաշտոնական ոճի ենթառճերի և առ-
հասարակ գործառական ոճերի դասակարգում չի կատարում:
Նա տարբերակում է տեքստի հետևյալ գործառույթները՝
պատմողական (Narrative), բացատրական (Expository) և
ուղղորդող (Directive), քանի որ նա ուսումնասիրում է նյութը

տեքստի լեզվաբանության տեսանկյունից (տե՛ս Hiltunen R., 1990:91):

Ս. Լեզովն իր «Իրավաբանական հասկացությունները և իրավական լեզուն ժամանակակից արտասահմանյան հետազոտություններում» աշխատության մեջ անդրադարձնում է տարբեր լեզվաբանների կողմից առաջադրված կարծիքներին, որոնք պաշտոնական ոճը չեն դիտարկում որպես առանձին գործառական ոճ, այլ պարզապես առանձնացնում են իրավաբանական տեքստերի հետևյալ ենթատեսակները՝ հավաստագիր, պայմանագիր, կտակ, դատավճիռ և օրենսդրական ակտեր (տե՛ս Лезов С., 1986:62):

Շատ լեզվաբաններ են փորձել սահմանել որոշակի առնչություններ լեզվի գործառույթների և այն հատկանշական ոլորտի միջև, որում գործածվում է լեզուն: Եթե ոճագետների մի մասը գտնում է, որ ամեն մի գործառական ոճի հիմքում ընկած է լեզվի որևէ գործառույթ, ապա ուրիշները համոզված են, որ խոսքային հաղորդակցման բոլոր տեսակներում առկա են լեզվի երեք հիմնական գործառույթները՝ առաջադրված Կ. Բյուլլերի կողմից, որոնք են՝ *darstellung* (ներկայացում), *ausdruck* (արտահայտում), *appel* (ուղերժ): Բյուլլերյան այն դրույթը, որ ամեն մի խոսքային իրադրություն ենթադրում է երեք կողմ՝ հասցեագրող, հասցեատեր և ուղերժ, որի շնորհիվ տեղի է ունենում հաղորդակցում, հետագայում զարգացվեց Ռոման Յակոբսոնի կողմից: Նա բյուլլերյան տեսությունը հարստացրեց համատեքստի գաղափարով, որի սահմաններում տեղի է ունենում հաղորդակցումը, և նշանային համակարգի գաղափարով՝ առանց որի հասցեագրողը և հասցեատերը չեն կարող ուղարկել և ստանալ ուղերժ: Այստեղ է, որ առաջ է գալիս հաղորդակցման գաղափարը, և քանի որ ուղերժը կարող է ունենալ տարբեր ուղղվածություն (նպատակադրում), ըստ դրա էլ լեզվի գործառույթներից որևէ մեկը կարող է դառնալ գերիշխող: Այս հիմքի վրա էլ Յակոբսոնն առանձնացնում է խոսքի հետևյալ վեց գործառույթները.

վերաբերյալը նատանանշելու գործառույթ (referential function), որը, գերակշռում է տեղեկատվական խոսքում.

հուզական գործառույթ (emotive function), որն արտահայտում է լսողի վերաբերմունքն ասվածի նկատմամբ.

դիմելու գործառույթ (connotive function), որն ուղղված է հասցեատիրոջը հաղորդելուն.

խոսքարկման գործառույթ (phatic function) որը ենթադրում է, որ խոսքային ակտն ուղղված է ոչ թե տեղեկատվություն հաղորդելուն, այլ՝ հասցեագրողի և հասցեատիրոջ միջև կապ հաստատելուն.

մետալեզվաբանական գործառույթ (metalingual function), որն ուղղված է ոչ թե դեպի հաղորդակցման առարկան կամ համատեքստը, այլ դեպի լեզուն.

բանաստեղծական գործառույթ (poetic function), որը հետագայում վերածնակերպվեց տարբեր անվանումներով՝ գեղագիտական, գեղարվեստական, վերնշանային, ներգործման գործառույթ:

Հենց այս տեսություններն են, որ հիմք հանդիսացան ռուս լեզվաբան, ակադեմիկոս Վ. Վինոգրադովի համար, որը, խոսքի գործառույթների գաղափարն ուղղակիորեն կապելով գործառական ոճերի գաղափարի հետ, հստակորեն ցույց տվեց, որ խոսքի զանազան տեսակներում (խոսակցական ոճ, գիտական արձակի ոճ, պաշտոնական տեղեկատվության ոճ և այլն) համապատասխանաբար գերակշռող են դառնում վերոհիշյալ երեք՝ հաղորդակցման, գիտական և գեղագիտական ներգործման գործառույթներից որևէ մեկը:

Պաշտոնական ոճի և մասնավորապես օրենսդրական ենթաոճի առաջնային գործառույթներից մեկը հաղորդման գործառույթն է: Սակայն այն չի սահմանափակվում միայն հաղորդման գործառույթով: Փաստերը ցույց են տալիս, որ օրենսդրական ենթաոճում կիրառվող համապատասխան լեզվական միավորների և շարահյուսական կառույցների ինքնատիպ գործածության հիմնական նպատակադրումը հասցեատիրոջ կամքի վրա ներագդելն է, նրան հավաստելը,

ինչպես նաև նրան ուղղորդելն ու նրա մեջ օրենքի նկատմամբ գնահատողական վերաբերմունք առաջացնելը: Այսինքն, հաղորդման գործառույթին զուգահեռ գործում են նաև այլ գործառույթներ, որոնք պաշտոնական խոսքում և մասնավորապես օրենսդրական գրավոր հաղորդակցման գործընթացում ունեն մեծ դեր: Այս առումով առավել ուշագրավ է շվեդ լեզվաբան Պ. Լինելի տեսությունը, որտեղ հեղինակը լեզվի գործառույթներին անդրադառնում է գրավոր հաղորդակցման տեսանկյունից: Այդ գործառույթներն են՝ արտահայտչականության գործառույթ (expressive function), ներագդման գործառույթ (evocative function), վերաբերյալը մատնանշելու գործառույթ (referential function) և հասարակական գործառույթ (social function) (տե՛ս Linell P., 1982:149-154): Արտահայտչականության գործառույթը միտված է արտահայտելու հասցեագրողի կարծիքը, զգացմունքները, վերաբերմունքը, կամքը: Ներագդման գործառույթը դիտարկում է հաղորդակցումը որպես հասցեատիրոջ կամքի վրա ներագդելու միջոց, որի բուն նպատակն է նպաստել հաղորդվող նյութի ճշգրիտ ընկալմանն ու առաջացնել որոշակի վերաբերմունք ասվածի նկատմամբ: Վերաբերյալը մատնանշելու գործառույթն արտահայտում է օբյեկտիվ իրականության մի շարք իրողություններ, որտեղ հաղորդակցումը դիտվում է որպես օբյեկտիվ իրականությունը համայն աշխարհին ներկայացնելու, վերլուծելու և փաստարկելու միջոց: Հասարակական գործառույթն ուղղված է հասցեագրողի և հասցեատիրոջ միջև հասարակական կապի իրացմանը: Վերջինս կրում է մեկ այլ անվանում ևս՝ խոսքարկման գործառույթ (phatic function): Դիտարկելով հաղորդակցումը հոգեբանական տեսանկյունից՝ շվեդ լեզվաբանը հավելում է նաև հետևյալ գործառույթները՝ ճանաչողական (cognitive), հուզական (emotive) և գործաբանական (practical): Դրանցից առաջինն անմիջականորեն վերաբերում է գիտելիքներին, իմացությանը և հասկացությանը, երկրորդը արտահայտում է հասցեատիրոջ հուզական աշխարհը, իսկ գործաբանական գործառույթի դեպքում հաղորդակցումը դիտվում է